նորընծայ հաւատացեալին ձգել մի փոս եւ այնտեղ պահել երեք օր: Այդ միջոցին կատարւում էին զանազան արարողութիւններ, նպատակ ունենալով քաւել, մաքրել նորընծային եւ արժանացնել աստուածային խորհրդին:

Այլապէս ասած, ամէն մի նորընծայ կըրկնում էր կամ վերապրում էր այն, ինչ որ կրել էր մեծ վարդապետ Ատիսը, (Graillot, o. c. էջ 155 եւ հետ.), ինչպէս որ քրիստոնեայ պատարագը եւ պատարագիչը պատկերաւորումն են Քրիստոսի եւ նրա տնտեսութեան:

ԱԲՈՎԵԱՆ ԵՒ ՀԱՔՍՏՀԱՈՒԶԷՆ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

II

Այս յօդուածի նախընթաց գլխի մէջ մենք ընթերցողներին ծանօթացրինք գերման ճամբորդ եւ գիտնական Հաքստհաուզէնի անձնաւորութեան եւ նրա աշխատութեան հետ: Առաջ բերինք այն տեղեկութիւնները, որ հաղորդում է մեզ Հաքստհաուզէն Խ. Աբովեանի մասին: Ասացինք, որ Հաքստհաուզէնի գործը մեծարժէք նիւթեր է պարունակում 19-րդ դարի առաջին կէսի հայ վիճակագրական, ընկերային-տնտեսական վիճակի ու կենցաղավարութեան ուսումնասիրութեան համար: Ասացինք նոյնպէս, որ այդ նիւթերը մեծ մասով Աբովեանն է հաղորդել գերման ականաւոր ճամբորդին,— գրաւոր կամ բանաւոր կերպով,— որով եւ նրանց հաւաքողը եւ հեղինակը սեպուել կարող է որչափ Հաքստհաուզէն, այնչափ եւ Աբովեան:

Այստեղ մի կողմ կը թողնենք Հաքստհաուզէնի «Անդրկովկաս» աշխատութեան զուտ ճամբորդական-նկարագրական հատուածները, ինչպէս նաեւ այն գլուխները, ուր հեղինակը խօսում է հայոց պատմական անցեալի եւ մատենագրութեան մասին: Կանգ կ'առնենք միմիայն Հայաստանի եւ հայ ժողովուրդի ներքին կեանքը շօշափող հատուածների վրայ, քանի որ հէնց ա'յդ տեսակէտից է մեզ համար արժէքաւոր ու եզական այդ աշխատութիւնը:

Հետաքրքրական է նախ իմանալ, թէ ի՞նչ վիճակագրական տեղեկութիւններ է հաղորդում Հաքստհաուզէն հայութեան եւ ընդհանրապէս Անդրկովկասի ու նրա ժողովուրդների մասին: Մեզ համար մասնակի՛ նշանակութիւն ունին այդ թուական տուեալները, պարզելու համար մեր ժողովուրդի քանակական պատկերը 80–90 տարի մեզնից առաջ՝ Անդրկովկասի սահմաններում:

Ամբողջ Կովկասի բնակչութեան թիւը Հաքստհաուզէն հաշուում է 4,320,000, որից միմիայն Անդրկովկասինը՝ 2,150,000: Մնացածից՝ Հիւսիսային Կովկասին ընկնում էին 620,000 բնակիչներ, իսկ ազատ լեռնականների թիւն էր 1,550,000· (հատոր Բ. էջ 95):

Իր աշխատութեան մէջ մի ուրիշ տեղ (Ա. 53) Հաքստհաուզէն Կովկասի համար տալիս է 4 միլիոն թիւը (1½ միլիոն՝ Ռուսաստանին ենթակայ*), 2½ միլիոն էլ՝ այն ժամանակ դեռ եւս չնուաճուած լեռնական անկախ ազգաբնակութեան):

Այս ծանօթութեանը նա աւելացնում է հետեւեալ պատմական տեսութիւնը.—

«Երբ Բատու-Խանը (1224) այս ամբողջ երկիրը նուաճեց, նա հրամայեց տեղացիներից հաւաքել մի բանակ, որ պիտի կազմէր արաբական ազգաբնակութեան 10 առ հարիւրը: Այդպիսով նա հաւաքեց 800,000 կռուող մարդիկ: Սրանից հետեւցնել պէտք է, որ այն ժամանակուայ բնակչութեան թիւը 16 միլիոն էր, այսինքն՝ այժմեանի քառապատիկը: Այժմ այս երկիրը չէ կարող այդչափ մարդ կերակրել: Այն ժամանակ դա հնարաւոր էր՝ միմիայն

*) Ուրիշ խօսքով՝ Անդրկովկասին է վերաբերում այդ թիւը: